ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ Ն. Ք. IV-III ԴԴ.

Հայաստանում ուրարտական շրջանում տեղի ունեցած ուրբանիզացիայի արդյունքում Հայկական լեռնաշխարհը ծածկվեց քաղաքների լայն ցանցով: Դրանք հանդիսանում էին խոշոր ռազմական ու տնտեսական կենտրոններ, ունեին զարգացած արհեստագործություն, ջրովի վարելահողեր, բանջարանոցներ ու այգիներ, վերամշակված երկրագործական ու անասնապահական մթերքները պահելու համար հսկայական մառաններ ու ամբարներ: Բիայնելեի կործանման հետ քաղաքներն ավերվեցին ու անկում ապրեցին: Գոյատևեցին պաշտամունքային կենտրոնները, որոնք հիմնականում տեղավորված էին Եփրատի և Արածանիի հովիտներում[1]: Ուրարտական շրջանի մշակութային ավանդույթները երկար ժամանակ գոյատևեցին Հայաստանում, ուրբանիզացիոն գործընթացները, սակայն, Ն. Ք. VI-IV դդ. չշարունակվեցին: Գրավոր աղբյուրները Ն. Ք. VI-IV դդ. քաղաքների մասին թեև որևէ տեղեկություն չեն հաղորդում, բայց Վանի ժայռին Քսերքսես I-ի (Ն. Ք. 486-465 թթ.) թողած եռալեզու շինարարական արձանագրությունը[2] պատահական չպետք է համարել: Այնտեղ խոսվում է պետական կարիքների համար կառուցված շինությունների մասին: Վանը սատրապական կենտրոն էր և քաղաք:

Վան. Մովսես Խորենացին Վանի կառուցումը վերագրում է Շամիրամին, նշում է քաղաքի տեղը, որ այն կառուցված է «7Աղի ծովակի»՝ Վանա լճի արևելյան ափին, արևելք-արևմուտք ձգվող ժայռոտ բլրի վրա: Նա նկարագրում է քաղաքի ամուր պարիսպները, պղնձակերտ դռները, գագաթի միջնաբերդի «7դժվար մտնելու և դժվար դուրս գալու» ահռելի արքայանիստ շինվածքները (պալատները), քաղաքի ընդարձակ և գեղեցիկ փողոցները, կրկնահարկ և եռահարկ ապարանքները (Ա, ԺԶ): Այսինքն, Մովսես Խորենացին ներկայացնում է իր ժամանակի քաղաքը: Ինչ վերաբերում է ժայռափոր սենյակներին, քարաժայռի հարթեցված երեսի գրերին, անկասկած դրանք ուրարտական ժայռափոր կառույցներն ու սեպագիր արձանագրություններն են: Տուշպա-Վանի միջնաբերդի պարիսպները կառուցված են բազալտից[3]:

Ուրարտական պարիսպների մի մասը գոյատևել են մինչև մեր օրերը: Դրանք, սակայն, հազիվ թե նույնությամբ են մեզ հասել: Անշուշտ, հետագա շրջաններում վերանորոգվել, վերակառուցվել կամ փոփոխության են ենթարկվել: Դա հստակ երևում է Մովսես Խորենացու Մենուայի ջրանցքի նկարագրության մեջ «7կրի և ավազի շաղախով» կամ «7քարերի շուրջն եղած կրի ծեփին» վկայությունից: Կրաշաղախը շինարարության մեջ սկսել է օգտագործվել մ. թ. առաջին դարերից: Նույն ժամանակին են պատկանում նաև «7չքնաղ և զարմանալու արժանի բաղնիքները»-ը (Ա, ԺԶ): Էրմիտաժում պահվում են Վանից բերված հելլենիստական շրջանի գունազարդ խեցեղենի բեկորներ: Վանը հնագիտական ուսումնասիրության գրեթե չի ենթարկվել, ուստի պարզ չէ, թե Աքեմենյան և հետագա դարաշրջաններում ուրարտական քաղաքն

---

[1] **А. Г. Периханян**, Храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959, с. 8-9, 79-81, 99-100.

[2] **R. Kent**, Old Persion.Grammer. Texts lexicon, New Haven, 1953, p. 152-153.

[3] **Б. Б. Пиотровский**, Ванское царство (Урарту), Москва, 1959, табл. X-XI.

ինչ փոփոխություններ է կրել, նրա կառույցներն ինչ չափով են օգտագործվել և ինչ տարածք են զբաղեցրել: Հայտնի է միայն, որ Վանը IV դարում խոշորագույն քաղաք էր և 368-369 թթ. Շապուհ II-ի կողմից ավերվեց և բնակչության մեծ մասը գերեվարվեց:

Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ բացի Վանից ուրարտական մի շարք քաղաքներ նույնպես շարունակում են գոյատևել (Էրեբունի-Երևան, Ալթին-թեփե, Ռոսախինիլի, Արգիշտիխինիլի-Արմավիր և այլն):

Էրեբունի-Երևան. Հնագիտական աշխատանքները որոշակի տվյալներ են հաղորդում հետուրարտական Էրեբունու մասին: Աքեմենյան շրջանում, հավանաբար, Էրեբունին եղել է սատրապական կենտրոն: Պահպանվել են միջնաբերդի ուրարտական պարիսպները: Ն. Ք. 520 թ. հետո արմատական փոփոխությունների է ենթարկվել պալատը: Տաճարի մուտքի առջևի սյունաշարը ընդլայնվել և վերածվել է 30 սյունանոց (5x6) պալատական հանդիսավոր ընդունելությունների սյունազարդ սրահի (ապադանա): Ուրարտականի համեմատ սրահի պատերը սրբատաշ քարերից են և ունեն ավելի փոքր որմնահեցեր: Ներսից պատերի երկայնքով աղյուսաշեն նստարաններ կան, իսկ հարավային մասում տեղադրված է աղյուսաշեն եռաստիճան զոհասեղան (բարձր. 86 սմ):

Ուրարտական «7սուսի» (susi) կոչվող տաճարի առջևի ներքին բակի սյուները վերացվել են, դռները փակվել, կառուցվել են նոր պատեր: Ուրարտական տաճարը և առջևի բակը վերածվել է առանձին շինության, որը նման է աքեմենյան կրակի տաճարներին: Պալատի արևելյան կողմում գտնվում է երկարավուն մի մեծ սենյակ: Շինությունն ունի կամարաձև խորշեր, լուսավորվել է դռնից (արտաքին չափերը՝ 12x9 մ): Այն կրակի երկրորդ տաճարն[4] է: Կրակի տաճարների կառուցումը հավանաբար կապված է ընդդեմ Դևերի Քսերքսեսի կատարած ռեֆորմի հետ, երբ տեղական աստվածների սրբավայրերը փոխարինվեցին կրակի տաճարներով: Վաղ հայկական ճարտարապետության մեջ նորույթը աղյուսից պատրաստված կամարն է, որը համարվում է ամենահինը Հայաստանում և այլն:

Հայտնաբերվել են Ն. Ք. VI-III դդ. բնորոշ մի շարք ուշագրավ նյութեր՝ արծաթյա հեծյալի ձիու առաջամասով (Ն. Ք. IV դ.), ոսկեջրած (Ն. Ք. Vդ.) պտյակներ (ռիտոններ), ցլի գլխով ոսկեջրած գավաթ, վերին մասում թաղման հոգեհացի տեսարանով, որի կենտրոնական կերպարը հին հունական աստվածներից Ասկլեպիոսն է (Ն. Ք. IVդ. վերջ – III դ. սկիզբ), գնդաձև իրանով ոճավորված տերևների ուղղահայաց զարդերով, լայնաբերան արծաթյա գավաթ, (Ն. Ք. V դ.), խեցեղեն, Միլեթյան դրամներ, սանձեր, նետասլաքներ, ուլունքներ և այլն: Բացի արծաթյա ռիտոններից ու գավաթներից, մնացածը հայտնաբերվել են «7Սուսիի» կրակի տաճարի վերածված սրբարանից, այսինքն նվիրատվություն են: Նույնը վերաբերում է նաև պտյակներին: Դա նշանակում է՝ Էրեբունիում կյանքը շարունակվել է նաև հետուրարտական շրջանում: Վերջիններս կարող էին նվիրաբերվել Ն. Ք. III դ. սկզբից ոչ շուտ, քանի որ ցլագլուխ պտյակը պատկանում է այդ շրջանին:

Ուշագրավ է նաև մուտքի աջ կողմի համալիրից հայտնաբերված հելլենիստական

[4] **Գ. Ա. Տիրացյան**, Արին-Բերդի սյունազարդ դահլիճը և սատրապական կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում, ՀՍՍՀ ԳԱԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, N 7-8, էջ 104-113, **К. Л. Оганесян**, Арин-Берд, I, Архитектура Эребуни, Ереван, 1961, с. 75-102.

խեցեղենը[5]: Այս ամենը խոսում են այն մասին, որ Էրեբունիում կյանքը շարունակվել է մինչև մ. թ. I դարը:

Արմավիր. Արմավիրը Արարատյան դաշտի արևմտյան մասում, Արաքսի ձախ ափին կառուցված ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի (հիմնադրվել է 776 թ.) արևելյան միջնաբերդն էր, պաշտամունքային կենտրոնը[6]: Այստեղից են հայտնաբերվել Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի տաճարներ կառուցելու մասին հիշատակող արձանագրությունների զգալի մասը[7]: Արմավիրում շինարարական աշխատանքներ է կատարել նաև Ռուսա III թագավորը:

Կառուցվել են դիցարանի գլխավոր աստված Խալդիին և Կուեռային նվիրված տաճարներ, տնկել են խաղողուտ և անտառ: Այդ են վկայում նաև պեղումների արդյունքները:

Արմավիրի մասին որոշ տեղեկություններ է հաղորդում Մովսես Խորենացին, որը Արմավիրի կառուցումը վերագրում է Հայկի սերունդներից Արամայիսին[8]: Արմավիրը բնակեցված է եղել դեռևս Ն. Ք. IV հազարամյակի վերջերից և ի սկզբանե, հավանաբար, մեծ թվով տարբեր մեծության ու խորության քարանձավների շնորհիվ, եղել է պաշտամունքային վայր[9]:

Ուրարտական պետության անկումից հետո շատ չանցած Արմավիրում կյանքը վերականգնվում է: Արմավիրում վաղ հայկական ճարտարապետական շինություններ չեն հայտնաբերվել: Օգտագործվել են ուրարտական կառույցները: Կան, սակայն, այդ ժամանակաշրջանին բնորոշ հնագիտական կարևոր գտածոներ, որոնք վկայում են Արմավիրի պաշտամունքային խոշոր կենտրոն լինելու մասին: Դրանց թվին են պատկանում պաշտամունքային բնույթի (արևի աստծու, երկնային լուսատուների և այլ տեսակի) պատկերներով ժայռաբեկորները, որոնց վրա Ն. Ք. III դ. հունարեն արձանագրություններ են փորագրվել (7 հ.) տնտեսական բնույթի էլամերեն արձանագրությամբ կավե սալիկները[10], որոնք եզակի են Հայաստանում, ոսկյա լուսնաձև կրծքազարդը[11] (պեկտորալ), «Ֆիյունիկյան» տիպի ապակյա սրվակը (Ն. Ք. V-I V դդ), որը ծառայել է ծարիր-սուրմա պահելու համար, խեցեղենը՝ ցլակերպ պրոտոմայով պտյակը (ռիտոնը), բաղազլուխ կանթով փոքրիկ թասը, խնկարկման անոթի կոնաձև կափարիչները, որոնցից մեկի վերին մասն ավարտվում է բաղի քանդակով, իսկ ներքին մասում պատկերված է եղջերուների ու եղնիկների շարան, առնակոսներով հարդարված ամֆորան, կավե կնքադրոշմները և այլն:

Գավգամելայի ճակատամարտում (Ն. Ք. 331-330 թթ.) Ալեքսանդր Մակեդոնացու

---

[5] **Žores Hacatrian**, A.Z. Markarian, I Rhyta di Erebuni nel contesto dell' Arte Achemenide e Greco Persiana. "Partica" incontri di culture nel mondo Antico, N5, 2003, Pisa. Roma, p. 9-20, fig. 1,4,5,7,8; **Մ. Ա. Իսրայելյան**, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Երևան, 1971, էջ 40; **Հ. Վ. Սարգսեան,** Հայաստանի դրամաշրջանառութեան վաղագոյն վկայութիւնների մասին, Հայ դրամագիտական հանդես, հ. XXIV, N 1, էջ 11-14:

[6] **А. А. Мартиросян**, Аргиштихинили, Ереван, 1974, с. 42.

[7] **Г. А. Меликишвили**, Урартские клинописные надписи, 1960, N 143, 165.

[8] Մովսես Խորենացի, I, 12.

[9] **И. Карапетян**, **Ж. Хачатрян, А. Канецян**, Доурартский Армавир (III- начало I тыс. До н.э.), ИФЖ, 2004, N 2, с. 254-275

[10] **Գ. Ա. Տիրացյան**, **Ի. Ա. Կարապետյան**, Արմավիրի 1985-1986 թթ. պեղումները, ՊԲՀ, 1988, N 3, էջ 222, նկ. 2; **F. Wallat**, La letter, élamite d'Arménié, zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archällogie, Bd. 87, Berlin, New York, 1997, s. 258-269.

[11] **Г. А. Тирацян**, Золотая некрополь из Армавира (Армения), СА, 1968, N 4, с. 190-198.

հաղթանակից հետո ստեղծված նոր պայմանները հնարավորություն ընձեռեցին արևելյան և հելլենական մշակույթների խաչաձևմանը և նոր սոցիալ-տնտեսական հիմքի վրա, այսպես կոչված, «Հելլենիստական» մշակույթի առաջացմանը: Նոր պայմաններին բնորոշ էր առևտրա-տնտեսական կապերի, ընթացիկ առևտրի աշխուժացումը և նոր քաղաքների հիմնադրումն ու քաղաքային կյանքի զարգացումը, որը վերածվեց ուրբանիստական պայթյունի: Այն նպաստեց նորանկախ պետությունների առաջընթացին[12]: Գոյություն ունեին երկու տիպի հելլենիստական երկրներ՝ հունա-մակեդոնական քաղաքական իշխանությամբ և տեղական:

Առաջին տիպի երկրներում տեղի ունեցող բոլոր տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային առաջընթացն ու փոփոխությունները այս կամ այն կերպ տեղ էին գտնում նաև երկրորդ տիպի երկրներում, որի մեջ էր մտնում նաև Հայաստանը:

Հայաստանի անկախ պետականության վերականգնումը սատրապ Երվանդի կողմից և հելլենիստական քաղաքակրթության տարածումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին երկրի հետագա առաջընթացի համար: Նորանկախ Հայաստանի մայրաքաղաք դարձավ Արմավիրը:

Արմավիրի բլուրը (բարձր. 76 մ) Արարատյան հարթավայրի նկատմամբ ունեցած իր իշխող դիրքի, զառիթափ լանջերի շնորհիվ դժվար մատչելի էր: Այն գտնվում էր առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ Արաքսի ափին, որն ապահովում էր խմելու և ոռոգման ջրով: Այսինքն, ստրատեգիական, տնտեսական առումով նստավայրի տեղը ճիշտ էր ընտրված: Պեղումներով բացված միջնաբերդի (մոտ 2 հա) ուրարտական պաշտպանական համակարգը հաջողությամբ ծառայել է ինչպես վաղ հայկական, այնպես էլ հելլենիստական շրջանում: Այն կառուցված է ռելիեֆին համապատասխան, բազալտե տարբեր մեծության ուղղանկյուն զանգվածեղ, ռուստիկում և հարթ մշակում ունեցող քարերով և կավե հում աղյուսով (լայն. 3,5-4 մ), ունի 7-8 մ հեռավորությամբ տեղադրված 1 մ ելուստով, 4,5-5 մ երկարությամբ ուղղանկյուն որմնահեցեր: Հյուսիսային կողմում, որոշ հատվածներում պարիսպը դրված է աստիճանաձև հարթեցված ժայռի վրա, որը բնորոշ է ուրարտական արվեստին:

Միջնաբերդի մուտքը գտնվում է Արգիշտի I-ի կառուցած պարսպի և ամրոցի արևմտյան մասում Սարդուրի II-ի ավելացրած պարիսպների, հյուսիս-արևմտյան երկու որմնահեցերի միջև, պահպանվել են քարե աստիճանները: Մուտքի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով հելլենիստական շրջանում կառուցվում է մի կլոր աշտարակ, որի բազալտե քարերը իրար հետ ամրացվել են, այսպես կոչված, ծիծեռնակապոչ փոսիկների մեջ ագուցված փայտերով:

---

[12] ՀԺՊ, I, Երևան, 1971, էջ 489-499; **Д. Шлюмберже**, эллинизированный Восток, Москва, 1985; **Э. Д. Фролов**, История эллинизма в биографиях его творцов, в кн. Г. Бенгстон, Правители эпохи эллинизма, Москва, 1982; с. 3-26; **Г. А. Кошеленко**, Греческий полис эллинистическом Востоке, Москва, 1979.

Միջնաբերդի բնակելի համալիրները, մասնակի փոփոխություններից հետո, ծառայել են նաև նոր տերերին: Բլրի բարձրադիր մասում, ուրարտական տաճարի տեղում, կիսավեր վիճակում, գտնվում է XIX դ. վերջին ուրարտական և հելլենիստական քարերից կառուցված մի անշուք փոքր եկեղեցի: Հելլենիստական շրջանում հարթակի հարավային և հարավ-արևելյան հատվածները վերականգնվել են և կառուցվել է նոր տաճար, նույն տեխնիկայով, ինչ որ վերոհիշյալ կլոր աշտարակը: Բարեկարգվել են միջնաբերդի արևելյան հատվածում գտնվող փողոցի հյուսիսային և հարավային պարիսպներին հենվող պալատական շինությունները՝ արևելյան ներքին բակով:



Արմավիրի բլրի գագաթին գտնվող տաճարական շինության հարթակը

Միջնաբերդի արևմտյան մասում երկու պարիսպների միջև ընկած տարածքը, որը Ռուսա III-ի ժամանակ վերածվել էր բազմասյուն դահլիճի, հելլենիստական շրջանում կառուցվել են պարզ հատակագծով փոքր բնակարաններ[13] (պատ. լայն. 1 մ) և այլ արտադրական կառույցներ:

Քաղաքային թաղամասերը գտնվում են միջնաբերդից արևմուտք ընկած տարածքում՝ հասնելով մինչև Նոր Արմավիր գյուղի բլրաշարքը, հյուսիսից՝ մինչև Բամբակաշատ գյուղի վարելահողերը, հարավից՝ մինչև Արաքսի հին հունը (մոտ 100 հա): Արևմտյան մասում՝ բլուրների հարևանությամբ, բացվել է հելլենիստական շրջանի ագարակի համալիրը, ներքին բակի շուրջ համախմբված բնակելի և տնտեսական, արտադրական կառույցներով: Սենյակները տաքացվել են կիսակլոր բուխարիկ-օջախներով:

Ուշագրավ են խաղող ճզմելու տուֆե տարապանը և ավազանը, կրաշաղախե սվաղով փոքր հարթակը[14]:

Քաղաքի դամբարանները ի հայտ են գալիս միջնաբերդի հյուսիսային ստորոտի, ժամանակակից գերեզմանոցի տարածքից, դրանք կարասային թաղումներ են Ն. Ք. II-I դդ. նյութերով, Ջրաշեն գյուղի գոմերի մոտ (հռոմեական դրամով և ապակե սրվակով), ինչպես նաև քաղաքի արևմտյան ծայրամասում և ուրարատական քաղաքի ավերակներում:

Քաղաքի տնտեսությունը կապված է եղել երկրագործության հետ (խաղողագործության, այրված ցորենի մնացորդները վկայում է, որ հացահատիկի մշակության), անասնապահության և արհեստագործության, առևտրի հետ, (մետաղագործություն, խեցեգործություն և այլն): Արմավիր բլրի արևելյան լանջին, որտեղ ստորոտում քարանձավ կա, տարբեր մակարդակների վրա բնական և արհեստական հարթակներ կան, մեծ ու փոքր կլորավուն ձվաձև փոսորակներ, գագաթին ժայռի մեջ փորված

---

[13] **Г. А. Тирацян**, Культура Древней Армении VI в. До н. э. – III в. н. э., (по археологическим данным), Ереван, 1988, с. 79-84-85, рис. 17; **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 3; Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I, Երևան, 1996, Աղ. 51, Ա:

[14] **Գ. Ա. Տիրացյան**, Արմավիրի պեղումները, ՊԲՀ, 1980, N 2, էջ 55; Հայկական ճարտարապետության պատմություն, I, Աղ. 51, Բ:

սենյակատիպ տարածքով, երկաստիճան պատ-պատվանդանի ձևով տաշվածքներ, կենտրոնական մասում բացվել է ժայռի եռաստիճան ճեղքը, Ն. Ք. IV դ. վերջին կամ III դ. առաջին կեսին եղել է բացօթյա տաճար, սրբավայր, Կոմմագենեի դամբարան-սրբավայրերի նման[15]:

Այդ նույն ժամանակ է, հավանաբար, հիմնադրվել նաև բլրի հարավային ստորոտի պատգամարանը, սոսի ծառերի պուրակով, պաշտամունքային քանդակազարդ քարերով և հունարեն արձանագրություններով: Ըստ երևույթին այս պաշտամունքային սրբավայրերին և միջնաբերդի տաճարին են վերաբերվում Մովսես Խորենացու վկայությունները (Ա. իա, Բ. ը, հէ), Արմավիրում Վաղարշակի մեհյան կառուցելու, արեգակին, լուսնին և իր նախնիներին արձաններ կանգնեցնելու, հանճարախոս Անուշավան Սոսանվերի, սոսի ծառերի տերևների սոսափյունից, նայելով քամու ուժին և ուղղությանը գուշակություններ անելու մասին: Արմավիրի արձանագրությունների (4 հ.) առաջին քարը, որը համարվում էր ոչնչացված, 1996 թ. հայտնաբերվել և վերադարձվել է գիտությանը, թեև առանց հունարեն արձանագրությունների (այդ մասը կոտրված է): Վրան այլ քանդակների թվում պահպանվել է նաև մարդու դեմք, որը Միհրին է պատկերում[16]:

Երվանդաշատ. Օրոնդես-Երվանդ վերջինը (Strabo, XI, XIV, 15) Ն. Ք. III դ. վերջին քառորդին մայրաքաղաքը Արմավիրից տեղափոխում է Երդանդաշատ: Մովսես Խորենացին, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Երվանդաշատի տեղի և շինության մասին, դա բացատրում է նրանով, որ Արաքս գետը հունը փոխել, հեռացել էր Արմավիր բլրից, ձմռանը ցուրտ քամիներից վտակը սառչում էր (հավանաբար դեռևս որոշ քանակությամբ ջուր հոսել է հին հունով) և մայրաքաղաքը զրկվում էր ջրից. «7Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և ի յերկարել ձմերայնոյն, և ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ: Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն: Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն, և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն: Եւ էր, ասեն, երկդիմի, որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելևմտից ճանապարհ տուընջենային, իսկ միւսն գիշերային և մարդադաւաց (Բ, լթ)»:

Երվանդաշատի և Երվանդակերտի տեղադրությամբ զբաղվել են մի շարք գիտնականներ, որոնք տարբեր կարծիքներ են հայտնել[17]: Նրանցից ոմանք չեն եղել տե-

---

[15] **Ի. Կարապետյան**, **Ժ. Խաչատրյան**, **Ա. Կանեցյան**, **Գ. Ղաֆադարյան**, Արմավիրի 1999 թ. աշխատանքների արդյունքները, Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը, Երևան, 2000, էջ 24-26; **Инеса Карапетян**, **Жорес Хачатрян, Амина Канецян**, Доурартский Армавир (III-начало Ітыс. до н.э.), ИФЖ, 2004, N 2, с. 254-275, рис. 2-7,9-12.

[16] Նույն տեղում, էջ 257-259, рис. 6.

[17] **Բ. Ն. Առաքելյան**, Որտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները.-«Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 3, էջ 83-93 (գրականությունը տե՛ս նույն տեղում); **Г. А. Тирацян**, Города

ղում, ուստի ճիշտ չեն տեղադրել, իսկ մյուսները շփոթել են Ծննդոց անտառի հետ: Վերջիններս Ախուրյան և Արաքս գետերի միախառնման տեղից արևելք, Արաքսի հյուսիսային (ձախ) ափին ընկած վայրում, մեծ տարածության վրա նկատել են քաղաքի պարիսպները, շինությունները և «7գտել» այն բարձունքը, որի շուրջը պտույտ էր անում Երասխը, իսկ դիմացից՝ այսինքն արևմուտքից, հոսում էր Ախուրյան գետը: Սակայն Մովսես Խորենացին չի ասում, թե Ախուրյան գետը հոսում է Երվանդաշատի միակտոր ապառաժ բլրի արևմտյան կողմից, այլ Երվանդաշատը կառուցվել է Ախուրյանի դիմաց գտնվող միակտոր ապառաժ բլրի վրա, «7որը շուրջ պատում է Երասխը» (միայն): Իրոք, Ախուրյանի Արաքսին միախառնվելու տեղի դիմաց, Արաքսի աջ (հարավային) ափին, գրեթե ուղղահայաց վեր է խոյանում առանձին կանգնած մի ապառաժ մեծ բլուր, «7որը շուրջ պատում է Երասխը»:

Մոտ 100 մ բարձրություն ունեցող այդ բլուրը գետի կողմից անմատչելի է և շատ հարմար պաշտպանության համար: Միչդեռ Արաքսի ձախ (հյուսիսային) ափը բլուրներից դեպի գետը փռվող դաշտ է (գետահովիտ) և հատկապես բլուրների կողմից խիստ անհարմար է պաշտպանության համար: Այս մասում, ինչպես Մովսես Խորենացին է նշել, Երվանդի տնկած Ծննդոց անտառն է եղել. «7Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն. և որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, և զեղանց և զեղջերուաց ազգ, և ցիռս ի վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց»[18]:

Եվ ահա վերոհիշյալ կարծիքի հեղինակները տեսել են այս անտառի պարիսպը, պատնեշը: Ըստ երևույթին, երբ Երվանդաշատը դադարեց թագավորանիստ քաղաք լինելուց, այս անտառն էլ կորցրեց իր նշանակությունը և հետագայում այնտեղ նույնպես հաստատվեցին բնակատեղիներ: Այս տարածքից հավաքված նյութերի մեջ հելլենիստական խեցեղենի բեկորները շատ աննշան են, գերակշռում են միջնադարյան նյութերը: Դա նշանակում է՝ այս էպոխայում այն բնակեցված չի եղել: Շատ հնարավոր է, որ Ծննդոց անտառում Երվանդը կառուցել է պալատական մի շենք՝ որսի ժամանակ հանգստանալու համար, ինչպես հետագայում արեց Տիգրանը՝ Տիգրանակերտի մոտ տնկած անտառում, և Խոսրով Կոտակը՝ Դվինի բլրի վրա իր տնկած Խոսրովակերտ անտառում[19]: «7Ծննդոց անտառից» հարավ-արևմուտք, ստորին դարավանդի վրա պեղվել է մի մեծ շենք (10x10 մ): Ենթադրվում է, որ դա է պալատը: Այն շրջապատված է պատնեշով (մակերեսը՝ մոտ 1 հա): Մշակութային շերտի խորությունը եղել է 2 մ, որտեղից հայտնաբերվել են կարասների և թասերի կարմիր փայլեցրած և գունազարդ տափաշշի բեկորներ[20]: Ոչ մի խոսք չի ասվում շենքի և պատնեշի շինարարական տեխնիկայի մասին: Երվանդ վերջինի (IV) թագավորության ընթաց-

---

Армении эллинистического времени в свете Археологических исследований, ВДИ, 1979, N 2, с. 166-167; **Г. А. Тирацян**, Культура древней Армении, с. 91-92.

[18] **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Բ. ԽԱ:

[19] Այդ մասին տե՛ս **Ժ. Խաչատրյան**, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին.- ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.,» , 1987, N 2, էջ 53-57: **Մովսես Խորենացի**, Բ, ԽԲ: Այս վկայությունը կարող է օգնել նաև Երվանդակերտի տեղադրությունը ճշտելուն:

[20] **Ф. И Тер-Мартиросов**, Ервандашат, Ервандакерт, Ервандаван. Топография, Типология, эпоха. Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Ереван, 1988, с. 83-84.

քում (Ն. Ք. 205-204 թթ.)[21], որսի ժամանակ հանգստանալու և գիշերելու համար կառուցված պալատը չէր կարող ունենալ 2 մ հաստության մշակութային շերտ: Գտնված նյութերը պատկանում են Ն. Ք. I դ.: Այդ շենքը հավանաբար կառուցվել է, երբ Երվանդաշատը դադարել էր մայրաքաղաք լինելուց, և հնարավոր է, որ Ծննդոց անտառը կորցրել էր իր նշանակությունը:

Թ. Թորամանյանը շրջել է Մովսես Խորենացու նշած Երվանդաշատի և Երվանդակերտի տեղադրության վայրերում, Արաքսի և Ախուրյանի միախառնման տեղանքում: Նա տեսել է «7Երվանդաշատի միջնաբերդի պարիսպներից թափված մեծազանգված քարերի վրա երկաթե կապի նշաններ: Երվանդաշատի բերդը շինված էր հնագույն պարիսպների նման, մեծազանգված որձաքարի անտաշ քարերով, որոնք միմյանց մոտ լավ ամրացնելու համար, կպցված էին երկաթե կապերով. թեև այժմ երկաթները հանված են, սակայն կապի փորված տեղերը մնում են քարերի վրա: Հաջի-Բայրամ գյուղում շատ կարելի է տեսնել այս քարերից, …»[22]: Ըստ Թ. Թորամանյանի՝ այդ կապերը նույնն են, ինչ որ Գառնիի ամրոցի և տաճարի մեծազանգված քարերի կապերը: Վերջիններս թվագրվում են Ն. Ք. I դարով: Այդօրինակ երկաթե կապերը Հայաստանում կիրառության մեջ են մտնում մ. թ. I դարերում: Հելլենիստական շրջանի շինարարական արվեստին բնորոշ է, այսպես կոչված. «7ծիծեռնակապոչ» կապերի միջոցով քարերն ամրացնելու եղանակը: Այդ եղանակով են ամրացված Արմավիրի, Արտաշատի, Զարիշատի (Զեռնակի թեփե), և հելլենիստական շրջանի մյուս հուշարձանների մոնումենտալ կառույցների մեծազանգված քարերը[23]:

Թ. Թորամանյանը, լինելով Երվանդակերտի ենթադրյալ վայրում, նշում է, որ այն կառուցված է նույն եղանակով, ինչ որ Երվանդաշատը մեծազանգված բազալտ քարերով, երկաթե կապերով և այլն: Նա գտնում, է որ Երվանդակերտ կոչվածը պետք է համարել Երվանդաշատը, իսկ Երվանդակերտը պետք է որոնել Արաքսի աջ ափին[24]: Ինչպես վերը տեսանք, Երվանդաշատի տեղադրությունը միանգամայն համապատասխանում է Մովսես Խորենացու վկայությանը:

Երվանդաշատը ստրատեգիական տեսակետից շատ հարմար դիրք է ունեցել: Միջնաբերդը գտնվել է Ախուրյանի Արաքսի հետ միախառնման տեղի, դիմացի անառիկ ժայռի վրա: Այն հյուսիսային, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան կողմերից անմատչելի է: Մովսես Խորենացու նկարագրած միջնաբերդը ամրացված է եղել բարձր պարիսպներով, դարպասներն ունեցել են պղնձե դռներ (գուցե կրկնակի): Դեպի դարպասը տանող երկաթե սանդուղքները հավանաբար եղել են շարժական, իսկ դարպասի (հնարավոր է՝ պալատի) երկու կողքերին թաքնված որոգայթներ են պատրաստվել՝ դավադիրներին բռնելու համար: Քաղաքը հավանաբար նույնպես պարսպապատ է եղել Արաքսի աջ ափին գտնվող հարթության վրա: Հնարավոր է երեք կողմից ջրային պատնեշ ունեցող քաղաքը հարավային կողմից ջրանցքով անջատվել է, ինչպես Արտաշեսն է արել Արտաշատը: Երվանդաշատը ապահովված էր խմելու և ոռոգելու ջրով: Արաքսի հովիտը շատ հարմար էր գյուղատնտեսության

---

[21] **Գ. Ա. Տիրացյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի Ն. Ք. III-II դարերի պատմության մասին, Բանբեր Մատենադարանի, N 6, 1962, էջ 20-21:

[22] **Թ. Թորամանյան**, Հայկական ճարտարապետություն, հ. I, Երևան, 1942, էջ 145-146:

[23] **Ժորես Խաչատրյան**, Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, ՊԲՀ, 2005, N 2, էջ 226-229:

[24] **Թ. Թորոմանյան**, նշվ. աշխ., էջ 145-146:

համար, Արաքսն ու Ախուրյանը ձկնառատ էին և այլն:

Երվանդաշատը գտնվում էր առևտրական ճանապարհի վրա, որը նպաստում էր առևտրի և արհեստագործության զարգացմանը: Իր բարենպաստ դիրքի շնորհիվ այն բարգավաճեց, մեծացավ և գոյատևեց մինչև մ. թ. IV դ. 60-ական թվականները: Հելլենիստական քաղաքներից Տիգրան II-ի Հայաստան գաղթեցրած բնակչության մի մասն էլ հանգրվանել է Երվանդաշատում: Քաղաքը Ն. Ք. I դ. և մ. թ. I դարերում դուրս է եկել իր սահմաններից և ստեղծվել են նոր թաղամասեր Ծննդոց անտառի ստորին դարավանդներում, Արաքսի աջ և ձախ ափերին: Այդ են վկայում շինարարական տեխնիկան և հնագիտական նյութերը:

Մովսես Խորենացին հաղորդում է, որ Երվանդը մի փոքր քաղաք կառուցեց Ախուրյան գետի վրա և կոչեց Բագարան, և այնտեղ տեղափոխեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը, մեհյաններ կառուցեց և իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց (Բ, խ): Այդտեղ կատարվում էին գուշակություններ և զբաղվում էին երազահանությամբ: Պատճառն էր, թե ժողովուրդը զոհաբերություններ կատարելու համար որ հավաքվի, «7քաղաքն զգուշությամբ չպահվի» (Բ, խ): Նախ նշենք, որ նոր տաճարներ կառուցելիս հին տաճարներից կուռքերին չէին տեղափոխում, քանի որ հին սրբավայրերը շարունակում էին իրենց գոյությունը (Արմավիր, Բագարան և այլն):

Ելնելով Արմավիրի, Արտաշատի, Վաղարշապատի, հետագայում Դվինի օրինակից, երկրի կրոնական գլխավոր կենտրոնները պետք է գտնվեին մայրաքաղաքում: Երվանդաշատը նույնպես պետք է ունենար Արեգ-Միհր-Ապոլոնին և Անահիտին նվիրված տաճարներ, որոնք սովորաբար կառուցվում էին միջնաբերդից դուրս: Չմոռանանք, որ գլխավոր տաճարների քրմապետերը լինում էին արքայական ընտանիքից, կամ նրան մոտիկ կանգնած մարդկանցից: Բագարանը եղել է դամբարան-սրբավայր (հիերոթեսիոն): Պարզապես Մովսես Խորենացին յուրովի է մեկնաբանել այն: Դամբարան-սրբավայր է եղել նաև Բագավանում[25], որտեղ Տիգրան վերջինը «7…պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագավանում՝ Բագրևանդ գավառում, գերեզմանի վրա բագին շինելով, որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն գիշերելու համար: Հետո Վաղարշն այդ տեղում ժողովորդական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, նավասարդի ամսագլխին»:

Երվանդաշատը նույնպես, մինչև 368 թ. Շապուհի կողմից ավերվելը, Հայաստանի խոշոր, ծաղկուն քաղաքներից մեկն էր:

Երվանդակերտի հիմնադրումը ևս Մովսես Խորենացին վերագրում է Երվանդ վերջինին: Նա նկարագրելով գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտը՝ նշում է. «7Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն»[26]: Ախուրյան գետի երկու ափին, լեռների լանջին կառուցված (առավել ևս վերոհիշյալ հեղինակների տեղադրած) Երվանդակերտից կարող էր երևալ միայն Ախուրյանի դիմաց գտնվող ապառաժ թագավորանիստ բլրի բարձրավանդակը, ոչ թե Ծննդոց անտառը:

Տարբեր տարիների դիտարկումները ցույց տվեցին, որ Երվանդակերտը տեղադրված է Ախուրյանի երկու ափին, Արաքսից մոտ 2 կմ հյուսիս, Բագարան տանող

[25] **Մովսես Խորենացի**, Բ, ԿԶ:

[26] **Մովսես Խորենացի**, Բ, ԽԲ:

ճանապահին: Դեպի հարավ, գետի ափերին, երևում են շինությունների հետքեր: Աջ ափի թեքությունը համեմատաբար քիչ է և ավելի լայն ու հարմար է այգիների և կառույցների համար: Ձախ ափին, ինչպես ժամանակին Թ. Թորոմանյանն էր տեսել, մեծազանգված քարերով, երկաթե գամերով ամրացված պատերով կառույցներ կան: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Ղկերտ» վերջավորությամբ անվանումները հանդիպում են միայն Պարթևստանում, Մեծ Հայքում և Ծոփք-Կոմմագենեում: Այն երևան է գալիս Պարթևստանում Միհրդատ II-ի օրոք: Ամենահին քաղաքը «Ղկերտ» բաղադրիչով Միհրդատակերտն է: Պարթևների ազդեցության ոլորտում գտնվող որոշ երկներում նույն ժամանակ և ավելի ուշ ստեղծվում են նմանատիպ քաղաքանվանումներ: Արշակունիների օրոք «Ղկերտը» ընդունվել է որպես հայկական բառ[27]: Ըստ երևույթին Երվանդաշատի կողքին գտնվող դաստակերտը այդ ժամանակ կամ լավագույն դեպքում Ն. Ք. I դարում է ստացել Երվանդակերտ անվանումը: Մովսես Խորենացին իր գեղեցիկ նկարագրությունով ցույց է տալիս, թե ինչպիսին պետք է լինի իդեալական դաստակերտը:

Սամոսատը (Շամուշատը) հիմնադրվել է Ն. Ք. III դարի առաջին կեսին: Ելնելով նրանից, որ քաղաքը գոյություն է ունեցել աշխարհագրագետ Երատոսթենեսի կենդանության օրոք, մոտ Ն. Ք. 245 թ., ենթադրվում է, որ այն հիմնադրվել է Ծոփք - Կոմմագենեի միացյալ պետության թագավոր Սամոսի կողմից: Դրա օգտին են խոսում նաև Կոմմագենեի հունարեն արձանագրությունները: Այն գտնվում է Կոմմագենեի արևելյան մասում, Եփրատի վրա, Փոքր Ասիայից – Հայաստան Միջագետք, Մելիտենե-Եդեսիա-Խառան-Նիկեփորփոն-Տիգրիսի վրայի Սելևկիա տանող առևտրական գլխավոր ճանապարհին, մասնակցում էր միջազգային առևտրին, որը նպաստել է Սամոսատի երկարատև գոյությանը: Սամոսատում հայտնաբերված նյութերի մեջ հելլենիստականը քիչ է, բայց շատ կարևոր: Դրանք բարձրաքանդակներ և հունարեն արձանագրություններ են, որոնք վերաբերում են սրբավայրում թագավորի պաշտամունքի հետ կապված ծիսակատարություններին[28]:

Սամոս I–ի հետ է կապվում նաև Սամոկերտ քաղաքի հիմնադրումը: Սակայն, ինչպես վերը նշեցինք, «Ղկերտ» բաղադրիչով կոչվող քաղաքները հանդես են գալիս Ն. Ք. I դ.: Սամոկերտը, հավանաբար կառուցվել է Սամոս II- ի կողմից, որն իշխել է Ն. Ք. 130–100 թթ., երբ Ծոփք–Կոմմագենեի պետությունը բաժանվել էր: Սամոկերտը, ըստ վաղբյուզանդական աղբյուրների, գտնվում էր Ծոփքի արևելյան մասում:

Արշամաշատը[29] (անտիկ հեղինակների Արսամոսատան) հիմնադրվել է Ն. Ք. III դ. 40-ական թվականներին Արշամ թագավորի կողմից՝ որպես պետության նոր մայրաքաղաք: Այն գտնվում էր Եփրատից Արևելք, Արածանիից ոչ հեռու: Ըստ Պոլիբիոսի՝ Արածանիի և Տիգրիսի միջև գտնվող գեղեցիկ դաշտում[30], Եփրատի մոտ[31] Արածանիի ձախ ափին, Խարաբա գյուղի մոտ, Էկբատանից և Տիգրիսի վրայի Սելևկիայից Փոքր Ասիա՝ Մելիտենե-Կաբեյրա տանող առևտրական գլխավոր ճանապարհին:

---

[27] **Ռուբեն Վարդանյան**, «Կերտ» վերջավորությամբ տեղանունների ժամանակագրության շուրջը, Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, էջ 127-131:

[28] **K. Human**, **O. Puchstein**. Reisen in Kleinasien und Nord syrien Textband, Berlin, 1890.

[29] **Г. А. Тирацян**, Новые археологические материалы после урартского времени на территории западной Армении на территории (Турция) и их место в истории древнеармянской культуры, Древний Восток, Ереван, 1976, N 2, с. 136- 137.

[30] **Polib**, VIII, 25.

[31] **Plin**, VI, 10.

Բլրի վրա գտնվում է Միջնաբերդը, որը շրջապատի հարթավայրի նկատմամբ իշխող դիրք ուներ: Բլուրը երկու կողմից ողողում են Արածանիի ջրերը: Այսինքն, դիրքը ստրատեգիական տեսակետից շատ հարմար է: Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ ստորին շերտերը պատկանում են խեթական և ուրարտական շրջանին: Բացվել են միջնաբերդի պաշտպանական համակարգի առանձին հատվածներ, ուղղանկյուն հատակագծով աշտարակը և կավե շաղախով կառուցված բնակելի համալիրների հիմքերը: Աշտարակը կառուցված է առանց շաղախի, միջին չափերի ուղղանկյուն լավ մշակված բազալտ քարերով: Այն ուշագրավ է Հայաստանի շինարարական տեխնիկայի ուսումնասիրության առումով: Բացվել է նաև միջնաբերդի դարպասը պաշտպանող կիսակլոր մեծ աշտարակը, որտեղից ճանապարհը տանում է դեպի Արածանի: Քաղաքի պարիսպներն ունեն ուրարտական, հելլենիստական և միջնադարյան շարվածքներ:

Հայտնաբերված հնագիտական նյութերը վերաբերում են Ն. Ք. III - մ.թ. III դդ.: Ուշագրավ են Ն. Ք. IV–III դդ. պատկանող սև լաքով ատտիկյան անոթը, ինչպես նաև կիսաձվաձև բրոնզե գավաթը, սև փայլեցրած ցլակերպ անոթը, Կապադովկիայի թագավորներ Արիոբարզան I և Արիարաթ IX արծաթե դրամների գանձը, կավե բալզամարին և ճրագը[32]:

Արշամը, Ծոփք-Կոմմագենեի նոր մայրաքաղաք Արշամաշատից բացի, Ն. Ք. III դ. երրորդ քառորդին հիմնադրել է ևս երկու քաղաք: Եփրատի վրայի Արսամեան և Եփրատի աջակողմյան վտակ Նյումփայոսի վրայի Արսամեան: Կոմմագենեի հունարեն արձանագրություններից հայտնի է, որ այդ քաղաքներում եղել են պալատներ, տաճարներ: Սակայն դրանք մեզ չեն հասել: Եփրատի վրայի Նյումփայոսը հայտնաբերվել է դեռևս XIX դ. վերջերին գերմանացի[33] հնագետների կողմից: Քաղաքի մոտ (Գերգեր) կառուցված է եղել դամբարան-սրբավայր, որից պահպանվել է կոտրված մի արձանագրություն, ժայռի վրա, հավանաբար, իր նախնիներից մեկի բարձրաքանդակը և ստորերկրյա կառույցի մուտքը: Արձանագրությունից պարզվում է, որ տաճարը նվիրված է Ասգանդենե աստվածուհուն:

Նյումփայոսի վրայի Արսամեան հայտնաբերվել է XX դ. 50-ական թվականներին[34]: Նյումփայոսի ջրերը երկու դժվարամատչելի ժայռոտ բլուրների միջով հոսելով գնում- թափվում են Եփրատը: Այդ բլուրները Արշամը պարսպապատում է և դարձնում քաղաքի միջնաբերդը: Քաղաքի թաղամասերը կառուցվում են բլուրներից մեկի ստորոտին, ժամանակակից Էսկի Կյահտա գյուղի տարածքում: Էսկի Կյահտայի վրա է կառուցված նաև մյուս դամբարան սրբավայրը, որն ավելի լավ է պահպանվել: Երևում է ճանապարհը, որով ծիսակատարության մասնակիցները բարձրացել են մինչև լեռան գագաթը և դարավանդները տանող աստիճանները: Երկրորդ հարթակում ժայռի մեջ փորված ստորերկրյա սենյակներ են: Երրորդ հարթակում փորված են 158 մ երկարությամբ ստորերկրյա աստիճաններ և այլն: Ընդհանրապես, Կոմմագենեի մշակույթը հիմնականում հայտնի է իր դամբարան-սրբավայրից[35] (մոտ մեկ տասնյակ): Նյումփայոսի Սրսամեայից ոչ շատ հեռու գտնվող, Նեմրութ լեռան վրայի դամբարան-սրբավայրի, Անտիոքոս I-ի (Ն. Ք. 90-30 թթ.) հունարեն արձանագրություններից մեկը հաղորդում է, թե քաղաքը կառուցել է իր նախնի Արսամեսը: Անտիոքոսի

---

[32] **B. Ogün**, Haraba Excavations, 1969, Keban 2, Ankara, 1971, Tabl, 40,2,3,41,3.

[33] **K. Humann**, **O. Puchstein**, Réisen in Kleinasien und Wordsyrien, Berlin, 1890.

[34] **F. K. Dörner**, **TH. Goell**, Arsameia am Nymphaios, Berlin, 1963 (Istambuler Forschungen, Band 23).

[35] **Д. Шлюмберже**, Эллинизированный Восток, Москва, 1985.

հայրը՝ Միհրդատ Կալինիկոսը (Ն. Ք. III դ. վերջ - I դ. սկիզբ) Արսամեայում կառուցել է իր և նախնիների պաշտամունքին նվիրված սրբավայր:

Նյումփայոսի վրայի Արսամեան իր ստրատեգիական դիրքի շնորհիվ ուներ պաշտպանական կարևոր նշանակություն: Հայտնաբերված ճարտարապետական կառույցների մնացորդները առնչվում են ուրարտական քաղաքաշինական մշակույթի հետ, ինչպես ժայռերի մեջ փորված դարավանդները, սենյակները, գետնախարիսխները, քարերի մշակումը[36] և այլն:

Ծոփք-Կոմմագենեի թագավորներ Սամոսը և Արշամը Ն. Ք. III դ. կառուցել են հինգ քաղաք: Այս փաստը մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի քաղաքաշինության և ընդհանրապես մշակույթի ուսումնասիրության համար

[36] **Г. А. Тирацян**, Новый эллинистический центр в стране Гоммагене, рец на **F. K. Dцrner**, **TH. Goell**, Arsameia am Nymphaios, ВОНАН, 1969, № 3, с. 94 (на арм. яз.); **Г. А. Тирацян**, Культура древней Армении VIв. до н. э. – III в. н. э. , Ереван, 1988.